նորա զօրութիւնն բարձեալ և արձանագրութիւնն ջնջեալ համարի. զի մինչ 'ի թուականն յայն՝ մին 'ի բանալեաց էր 'ի ձեռս Հայոց եւ միւսն Յունաց։ Ուստի կախեալ գոլով այս 'ի հաճութենէ Կայսերական կամաց, մինչ 'ի ժամանումն Բարձրագոյն հրամանի պատուիրեալ են Յունաց անգործադրելի թողուլ զբանալին Հայոց, որպէս յայտ առնեն զայս գրեանքն եկեալ յԵրուսաղէմ։

Իսկ 'ի խնդրոց մին էր, զի 'ի Նորոգել Յունաց զեկեղեցին Բեթղեհէմի, փոխեցին զդիրս աստիճանաց 'ի հարաւային կողմն՝ որ հանէ 'ի վանս Յունաց, զի յառաջագոյն էր 'ի միոյ կողմանէ ևեթ, որպէս ցուցանէ հին յատակագիծն. յետոյ քակեալ զայն չինեցին զոյգ յերկուց կողմանց։ Սա այս թէպէտեւ բողոք բարձին Հայք և Լատին կղերք, թէ փոխեցին զնախնական ձեւն եկեղեցւոյ հակառակ Կայսերական հրամանի, սակայն Յոյնք յառաջագոյն հաճեալ էին զկամս Դատաւորին Երուսաղէմի եւ մեծամեծացն այլազգեաց, և առեալ էին գիր 'ի նոցանէ, թէ դոյզն ինչ փոփոխութիւն ոչ է հակառակ օրինաց եւ հրամանի։ Եւ զի յառաջագոյն 'ի քակել սանդխոցն 'ի հարաւ և 'ի հիւսիս՝ զանց արարեալ էին զայնու իբր անվնասակար. իբրեւ հարցումն եղեւ 'ի մեծէ Դենպետէն, նա եւս եթող զայն իբր անվնաս։

Երկրորդ խնդիրն է չորս սենեակք Հայոց 'ի Տաճարին Ս. Յարութեան, որք ոչ մուծան յարձանագիրս 'ի քննութեան պահու՝ ակնարկութեամբ Յունաց, և ոչ չինեցան. թէպէտեւ յառաջագոյն բողոք բարձին վասն այսոցիկ Պատրիարքն և միաբանք Հայոց, և 'ի ձեռն Դատաւորին խնդրեցին հրովարտակ վասն չինութեան նոցին, այլ խնդիրն կնճռոտեալ կարի երկարեցաւ։ Այժմ որոշումն ստանին արդարութեան եղեւ այսպէս. ընդհանուր նորոգութիւնն Ս. Յարութեան տուեալ է Յունաց, այլ յաղագս չինութեան սենեկացն Հայոց, 'ի Կայսերական կամաց կախեալ է. սակայն օրինօք Դատարանի առաջի երկուց ազգաց ստուգեսցի, եթէ յայտնի լինիցի թէ ոչ մուծան նոքա յարձանագիրս, յայնժամ 'ի ձեռն Դատաւորին, Ճարտարապետին և հսկողութեամբ Վերակացուին քննեսցի, և յօրինեսցի յատակագիծ նոցին 'ի թղթի եւ առաքեսցեն